Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 829 - Ա
որոշման

ԾՐԱԳԻՐ

«ԱՐԵՎԱՅԻՆ ՖՈՏՈՎՈԼՏԱՅԻՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ ԵՎ ՋՐԱՏԱՔԱՅՈՒՑԻՉՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	Այլընտրանքային էներգիայի աղբյուր ստեղծելու միջոցով Վանաձորի «Տարոն-4» թաղամասում կառուցվող երկու բնակելի տների շահառու ընտանիքների սոցիալական պայմանների բարելավում:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ակնկալվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	«ԱՄՔՈՐ Հայաստան» բարեգործական հիմնադրամ - 2,600,000 դրամ, ԱՄՆ - ի «Հայ օգնության և զարգացման ընկերակցություն» (ARDA) շահույթ չհետապնդող կազմակերպություն (ԱՄՆ, Փասադենա) - 261,700 դրամ
4.	Ծրագիրը կատարողը	«ԱՌՔ» բարեգործական հիմնադրամ (Երևան, Մամիկոնյանց 58/Ա, բնակարան 2, ՀՎՀՀ՝ 00218098)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Լոռու մարզ, Վանաձոր համայնք, «Տարոն-4» թաղամաս, Սեբաստացի 13 հողամաս, սոցիալական բնագավառ
6.	Ծրագրի բյուջեն	2,861,700 դրամ
7.	Բարեգործությունն ստացողը	Աննա Դարբինյանի (Լոռու մարզ, Վանաձոր, Վարդանանց 1-6-12 տնակ) և Կարեն Շահնազարյանի (Լոռու մարզ, Վանաձոր, Սանկտ-Պետերբուրգի 5/3-9-9 տնակ) ընտանիքները:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2023 թվականի նոյեմբերի 28-ից մինչև դեկտեմբերի 28-ը

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1) 4.6 կվտ հզորությամբ արևային ֆոտովոլտային երկու կայանի տեղադրում՝ 2,150,000 դրամ. 2) Երկու լրակազմ արևային 300 լիտր ջրատաքացուցիչի տեղադրում՝ 711,700 դրամ: Նախատեսվում է իրականացնել 2023 թվականի նոյեմբերի 28-ից մինչև դեկտեմբերի 28-ն ընկած ժամանակահատվածում:
10.	Ձեռք բերվող ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	4.6 կՎտ հզորությամբ արևային ֆոտովոլտային երկու կայանի և երկու լրակազմ արևային 300 լիտր ջրատաքացուցիչի սարքավորումների մատակարարման և տեղադրման աշխատանքների իրականացում՝ 2,861,700 դրամ
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր նախատեսված չեն:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Համագործակցություն չի նախատեսվում:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված «Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի» 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

21.11.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ